

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-307-

ՀՈՒՇԱՏԵՏՐ ՁԵՌՔԻ ՆՌՆԱԶԳԻ



ՊԵՏՏՐԱՏ
ՑԵՐԵԿԱՆ

1932

- 307 -

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ԶԵՌՔԻ ՆՌՆԱԶԳԻ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Ե ԳՏԵԼ Բ. Գ. Կ. ԲԱՆԱԿԻ
ՀՐԵՏԱԶՈՐԻ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՐԵՏԱԶՈՐԻ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

MTSZPUS

3 6 7 6 4 4 2

ՉԵՌՔԻ ՆՈՆԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԳՈՒՄԸ
ՅԵՎԱՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՏԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Չեռքի նոնակները նշանակվում են հակառակորդին ձեռնամարտում հարվածելու համար ինչպես պաշապանվելիս, այնպես էլ գրոհելու ժամանակ: Գրոհելու ժամանակ մեզ մոտ գործադրվում է 1914 թվի տիպարի ձեռքի նոնակը: Պայթելու ժամանակ դա տալիս է մինչև 3000 հատ թեթև կտորներ (բեկորներ), վորոնք հազվածում են պայթելու տեղից 12—15 մետրից վոչ ավելի հեռավորության վրա: Ուստի մարտում այս նոնակը կարելի չի նետել շարժվելու միջոցին և ապա վաղել դրա յետևից, կտորները չեն հասնի իրեն մարտիկին: Նույնիսկ զարկանից առաջացած 2—3 կտորը, վոր մեծ հեռավորության վրա չեն թռչում, իրենցից մի առանձին վտանգ չեն սպառնում նոնաձգի համար, և միայն ուսուցանելու պայմաններում է, վոր նշանակ նետելու ժամանակ պետք է պառկել թաղթատոցի յետևը, պատահական կերպով վիրավորվելուց խուսափելու համար:

Բացի այդ նոնակից մեզ մոտ գործադրվում են Միլլար (վարժական հրաձգության համար) և Յ. Լ. գործարանային նիշ ունեցող թուջից շինած ձեռքի նոնակները (պաշտպանության ժամանակ): Պայթելիս, այս նոնակները տալիս են մինչև 1000 հատ թուջե ծանր կտորներ (բեկորներ), վորոնք պայթելու տեղից հարվածում են մինչև 200 մետր հեռավորության վրա: Ուստի թուջե նոնակները պետք է նետել միմիայն թագստոցի յետևից բացիլքաց յեկող հակառակորդի վրա կամ թաղթատոցում գտնված հակառակորդի վրա, որինակ, տան պատահանի ներքը, գետնատան ներքը (ղեմյանկա) և այլն:

Պատերազմում ձեռքի նոնակ են ստանում բոլոր հրաձիգները: Ուստի դեռևս խաղող ժամանակ Կարմիր բանակի մարտիկները պետք է ուսումնասիրեն նոնակները, սովորեն խնամքով վարվելու նրանց հետ և նրանցով մարտում հրատորեն գործելու:

1914 թվի ՏԻՊԱՐԻ ՉԵՌՔԻ ՆՈՆԱԿԸ

Նունակի կառուցվածք

1914 թ. տիպարի ձեռքի նոնակի քաշն է 700 գրամ: Նա բաղկացած է՝ 1) մարմնից, 2) պա-

Թեցնող լիցքից, 3) հրապատիճ-դետոնատորից և 4) բոցավառող մեխանիզմից (նկ. 1):


Նռնակի մարմինը թիթեղից է, շնի ձև ունի: Ներսից պատի շուրջը դրված է լեռնաթմբ վանդակ, վերը հենց նռնակի պայթեղու ժամանակ բեկորներն է առնում:

Պայթեցնող լիցքի մոտ 400 գրամ ուժեղ պայթուցիչ նյութ է, վերը լցնում է նռնակի և կոթի վողջ ներքին խողովակ (նկ. 1): Լիցքը պայթում է դետոնատորից, ուստի, լեթն նռնակը դետոնատորից առանձին է պահվում, դա միանգամայն անվտանգ է:

Հրապատիճ-դետոնատորը ծառայում է լիցքը պայթեցնելու համար: Դա նռնակից միշտ առանձին է պահվում և մտցվում է նռնակի մեջ միմիայն նետելուց անմիջապես առաջ: Մտցնել հրապատիճ դետոնատորը՝ նշանակում է «լցնել նրան»:

Հրապատիճ դետոնատորը խողովակի տեսք ունի, ծոված ուռածակն է՝ տառի նման: Խողովակի վերին մասը ալյումինից (սպիտակ) է, իսկ ներքևի մասը պղնձից է: Հրապատիճ-դետոնատորի ներսում առբերվում են 3 մաս՝ փոքր պատիճ, վերը գտնվում է խողովակի կարճ ծայրում,

պատրուկը և հեռակայան փողակը գտնվում են ալյումինե խողովակի ճտում և պղնձե խողովակի վերին մասում: Դետոնատորը գտնվում է պղնձե խողովակի հատակում:



Նկ. 1. 1914 թվի օխպարի ձեռքի ճռնակ.

1—մարմին, 2—կափարիչ, 3—ձառար, 4—կոթ, 5—կոթի հատակը, 6—զարկան, 7—զարկանի կոթու, 8—մարտական զսպանակ, 9—հրահան, 10—ուղղադաս կոթու, 11—բուլիք (չեկա), 12—մարտական վողջի լծակը, 13—լծակի տռանցքը, 14—լծակի զսպանակը, 15—պահպանիչ ողակ, 16—հենարան ողակի համար, 17—բեկորներ տվող վանդակը, 18—հրապատիճ-դետոնատորի ճիտը, 19—փոքր պատիճ, 20—դոնակ, 21—հեռակայան փողակ, 22—դետոնատոր, 23—լիցքիցից դետոնատոր, 24—պայթեցնող լիցքը, 25—պատրուկ:

Բոցավառող մեխանիզմը ծառայում է փոքր պատիճը (պիստոնը) բոցավառելու համար՝ նռնակը նետելու ժամանակ: Դա գտնվում է նռնակի կողմում շինած մի չերկար փորակի մեջ և բաղկա-

ցած ե զարկանից իր անսղով ու գլխիկով, հրահանից, զարկանի կոթառից, գալաղուն (պտուտակաձև) մարտական զսպանակից, պահպանիչ բուլիքից, մարտական վտարի լծակից իր ապուսով և առանցքով, լծակի զսպանակից և պահպանիչ ողակից (նկ. 1):

Նոնակի բոցավառող մեխանիզմի ստուգումը

Նոնակները պահվում են իջկցրած զարկաններով. ըստ վորում պահպանիչ բուլիքը դրված և հրահանի լետեի կողմից, իսկ պահպանիչ ողակը հապցրած ե նոնակի կոթի վրա: Նոնակը գործողութիւններէ համար նախապատրաստելուց առաջ մարտիկ-նոնաձիգը պետք ե ստուգի, թե վորքան սարքին ե աշխատում նոնակի մեխանիզմը: Դրա համար՝

1. Ստուգիր, թե արդյոք ողակը լավ ե հարմարվում, միջանի անդամ ողակը հանիր և հապցրու: Ողակը պետք ե միանգամայն ազատ մտնի և դուրս գա: Յեթե ողակը դժվարութիւններ ե հանվում, ապա վտանգավոր ե նոնակը նետել, դա կարող ե բոլորովին մոտիկ ընկնել, բանդ լինելով նեղ ողակի պատճառով, այդպիսի ողակը պետք ե փոխարինել նորով, վերցնելով այն մի ուրիշ նոնակից:

2. Ստուգիր, թե արդյոք պահպանիչ բուլիքը լավ ե աշխատում: Դրա համար միջանի անդամ բուլիքը աջ ու ձախ մղիր մինչև վերջը: Բուլիքն իր ձղատի մեջ պետք ե ազատ շարժվի:

3. Ստուգիր մարտական վտարի լծակի, զարկանի և մարտական զսպանակի աշխատանքը: Դրա համար պահպանիչ բուլիքը (չեկան) մինչև վերջը քաշիր դեպի ձախ և ողակը հանիր նոնակի կոթից: Այնուհետև հրահանից բռնած զարկանը լետ քաշիր մինչև վերջը և նույն մոմենտին մատնեիով սեղմիր մարտական վտարի լծակը՝ ապուսը պետք ե պինդ բռնի և պահի զարկանը: Դրանից հետո բաց թող մարտական վտարի լծակը. դա պետք ե բարձրանա, ապուսը պետք ե բաց թողնի զարկանի գլխիկը, իսկ զարկանը պետք ե իջնի ուժեղ չխկոցով: Ստուգումը կըրկնիր 3—4 անգամ:

4. Ստուգիր, թե արդյոք զարկանի ասեղը լավ ե դուրս գալիս: Դրա համար զարկանն իջեցրած ժամանակ նախիր փորակի վերին ծայրին (նոնակի հատակի կողմից հաշված), Սուր ասեղը պետք ե կանգնած լինի փորակի մեջտեղում և լերևա ուղղապահ կոթառիկի անցքից: Յեթե ասեղը ծուռ ե կանգնած, փորակի մեջտեղում

չի, ապա նա հրապարտեմ չի դիպչի և նոնակը
նետելու դեպքում հրապարտեմ չի բողոքում:

5. Ստուգելի վողջ մեխանիզմի աշխատանքն
ամբողջովին վերցրած: Դրա համար՝ ողակը հա-
նիք, բուլիքը մինչև վերջը քաշիք դեպի ձախ,
հրահանից բռնած զարկանը մարտական վոտքի
վրա դիր (զարկանը վերև քաշիք), սեղմիր մար-
տական վոտքի լծակին և ապուռով բռնիք զար-
կանի գլխիկը. պահպանիչ բուլիքը մինչև վերջը
դեպի աջ քաշիք և ողակը կոթի վրա հազցրու:
Այնուհետև զարկանն իջեցրու, դրա համար պահ-
պանիչ բուլիքը մինչև վերջը դեպի ձախ քաշիք
և կոթից ողակը հանիք, զարկանը պետք և իջ-
նի ուժեղ չխկոցով:

Ստուգման ժամանակ հայտարարած յուրա-
քանչյուր անսարքության մասին զեկուցիր ջո-
կիդ հրամատարին:

Նոնակը նախապատրաստելը գործելու համար

Գործելու համար նոնակը նախապատրաստե-
լիս, պետք և զարկանը դնել պահպանիչ վոտքի
վրա և լցնել նոնակը, այսինքն, հրապարտեմ-
դետոնատորը մոցնել նոնակի մեջ:

Ջարկանը պահպանիչ վոտքի վրա դնելու համար՝

1. Նոնակը վերցրու աջ ձեռքդ կոթից այնպես
բռնած, վոր մարտական վոտքի լծակը լինի վե-
րևից. մատներով մի սեղմիր լծակի վրա:

2. Հանիր ողակը ձախ ձեռքիդ մատներով:

3. Ձախ ձեռքիդ բուլթ մատով պահպանիչ
բուլիքը մինչև վերջը քաշիք դեպի ձախ:

4. Ձախ ձեռքիդ բուլթ մատով և ցուցամատով
զարկանը հրահանից բռնած յետ քաշիք մինչև
վերջը:

5. Նույն մոմենտին աջ ձեռքիդ մատներով
սեղմիր մարտական վոտքի լծակի յետևի ծա-
րին, ապուռը կրճնի զարկանի գլխիկից:

6. Ձախ ձեռքիդ բուլթ մատով պահպանիչ բու-
լիքը մինչև վերջը սեղմիր դեպի աջ. Դա կկանգնի
հրահանի առջև:

7. Ձախ ձեռքով հազցրու ողակը նոնակի կոթի
վրա մինչև հեռարանը:

Այժմ լցրու նոնակը: Դրա համար՝

1. Նոնակը վերցրու ձախ ձեռքդ և բռնիք նրա
մարմնից, հատակը դեպի վեր:

2. Աջ ձեռքիդ մատներով դռնակն աջնպես
շուռ տուր, վոր նա չփակի դետոնատորի ճտի
համար պատրաստած փորակը:

3. Աջ ձեռքիդ մատներով վերցրու հրապար-
տիմ-դետոնատորը և նոնակի մեջ այնպես մոցրու,

վոր դրա լերկար ծայրը մտնի նռնակի հատակի մեջտեղում շինած մատնոցի մեջ, իսկ կարճ ծայրը մտնի զարկանի փորակի վերին մասը: Այլ ձեռքիդ բռնի մատով ուժեղ սեղմիր դետոնատորի վրա վերևից, վոր նա կիպ մտնի իր տեղը:

4. Շուտ տուր դռնակը, վոր նա կանգնի դետոնատորի ճտի վրա և մտնի կեռի տակ:

Նունակը լցնելիս հիօիր, վոր՝

1. Կարելի չէ լցնել միայն այն դեպքում, լերբ զարկանը վիր և բարձրացված և դրված է պահպանիչ վոտքի վրա: Յեթե սկսես նռնակը լցնել զարկանն իջեցրած դրուժյամբ, ապա փոքր պտիճը կդիպչի ասեղին և կըրցավառվի ձեռքիդ մեջ:

2. Յեթե դետոնատորն աղատ կերպով չի մըտնում նռնակի մեջ, կարելի չէ ուժեղ կերպով մատով սեղմել դրա վրա, բայց կատեգորիկ կերպով արգելվում է մի վորեն բանով խփել դետոնատորին: Կարող ե նռնակը պայթել:

3. Յերբեք նռնակը լցրած չպահես: Յեթե լցրել ես, բայց հարկ չի լեղել նետելու, անմիջապես դատարկիր: Դրա համար դռնակը բաց և զգուշությամբ դուրս հանիր դետոնատորը:

Նունակը ցնեցիր

Ձեռքի նռնակը նետվում է ձեռքով 35—40 մետր հեռավորությունից:

1. Լցրած նռնակը վերցրու աջ ձեռքդ (յեթե ձախիկ ես, վերցրու ձախ ձեռքդ) և կոթն այնպես սեղմիր, վոր մարտական վոտքի լծակը դեպի առաջ նայի (ձեռքի ափից հաշված), իսկ ողակի առջևի մասը գտնվի մատանե և միջին մատներիդ միջև:

2. Սեղմիր մատներովդ լծակի լետին ծայրի վրա մինչև վերջը:

3. Ձախ ձեռքիդ բռնի մատով պահպանիչ բուլլիքը դեպի ձախ քաշիր մինչև վերջը:

4. Ձեռքդ վեր բարձրացրու և ուժեղ թափով նռնակը նետիր դեպի վեր, դեպի նպատակն այնպես, վոր ողակը ձեռքիդ մեջ մնա:

Նետելու ժամանակ զարկանն իջնում է, ասեղը խփում է փոքր պատիճին և՛ պայթեցնում է նրան: Փոքր պատիճից վառվում է պատրուգը, այնուհետև հեռակայան փողակի վառոդն է վառվում: Նետելուց 5 վայրկյան հետո կրակը հասնում է դետոնատորին և նռնակը պայթում է: Նետելու ժամանակ, վորպեսզի նպատակը հարվածես և քեզ ու քո ընկերներին չվիրավորես, խստությամբ պահպանիր հետևյալ կանոնները:

Մի նետիր տնտարք մեխանիզմ ունեցող նրո-
նակը (դռնակը կամ բուլիքը կտարած, պինդ
ողակ ունեցող և այլն). դա արգելվում է:

Յերբեք առաջուց մի հանիր պահպանիչ ողակը:
Նռնակի պայթելու միջոցին ծածկվիր թագըս-
տոցի լետևում, յերբ սովորեցնում ես նռնակով
գործելու:

Յեթե նռնակը չպայթեց, յերբեք դրան ինքդ
ձեռք մի տուր, այլ պարապմունքը ղեկավարող
հրամատարին ղեկուցիր:


ՄԻԼԼՍԻ ՆՌՆԱԿԸ

Նռնակի կառուցվածքը

Միլլսի նռնակի քաշն է՝ մոտ 600 գրամ: Դա
բաղկացած է մարմնից, պայթեցնող լիցքից, պա-
տիճ-դետոնատորից և բոցավառող մեխանիզ-
մից (Նկ. 2):

Նռնակի մարմինը թուշից է, ձվաձև տեսք ու-
նի: Արտաքստ մարմնին ափսոսեղով բաժան-
ված է քառակուսիների, վորպեսզի հեշտությամբ
պայթի: Մարմնին ունի 3 անցք՝ ներքևի լայն
անցքը, վորի վրա պտուտակված է մի հատուկ
խցան, վերևի նեղ անցքը, վորի միջով դուրս է
գալիս զարկանի գլխիկը, և լիցքի անցքը՝ կող-

քից: Այս վերջին անցքի միջով նռնակի մեջ
լցնում են պայթեցնող լիցքը, վորից հետո այդ
անցքը վերջնականապես պտուտակում են (փա-
կում են) պղնձե խցանով: Արգելվում է այդ
խցանը լետ պտուտակել (հանել):



Նկ. 2. Միլլսի նռնակը.

1— մարմինը, 2— ներքևի անցքի
տափողակը, 3— լիցքի անցքը
խցանով, 4— մարտական վտարի
լծակը, 5— զարկանը, 6— ա— ափսե-
ները, 6— մարտական զսպանակը,
6— զարկանի գլխիկը, 7— պահ-
պանիչ բուլիքը ողակով, 8— լծա-
կի առանցքը, 9— կենտրոնական
խողովակը, 10— պատիճ-դետոնա-
տորի պսակը, 11— բեկֆորդյան
բուլը, 12— դետոնատորը, 13— փոքր պատիճ, 14— պայթեց-
նող լիցքը:

Ներսից՝ նռնակի մարմնի միջով, ներքևի անց-
քից մինչև վերևի անցքը անցնում է ալյումինե
կենտրոնական խողովակը կողքից ճյուղ տալով:
Սողովակի մեջ ղետեղվում է զարկանը և մար-
տական զսպանակը: Նռնակը լցնելիս, այդ խո-
ղովակի մեջ մտցնում են պատիճ-դետոնատորը:
Պայթեցնող լիցքը մոտ 85 գրամ ուժեղ պայ-

Թույլիկ նյութ ե: Գտնվում ե մարմնի ներսում (նկ. 2): Լիցքը պայթում ե միմիայն դետոնատորի շնորհիվ:

Պատիճ-դետոնատորը միշտ առանձին ե պահվում ե մտցվում ե շոնակի մեջ միմիայն նետեղուց անմիջապես առաջ: Պատիճ-դետոնատորը բաղկացած ե պսակից՝ փոքր պատիճից, բիկֆորդյան քուղից ե դետոնատորից, վորը գտնվում ե պղնձե խողովակի մեջ:

Բոցավառող մեխանիզմը նրա համար ե, վոր բոցավառի փոքր պատիճը շոնակի նետեղու ժամանակ: Դա բաղկացած ե դարկանից՝ իր պսակով ե գլխիկով, գալարուն (պտուտակաձև) մարտական զսպանակից, մարտական վոտքի լծակից ե պահպանիչ բուլիքից:

Մեխանիզմը ստուգելը, փանդելն ու սարքելը

Միլլսի շոնակները պահվում են դարկանը վեր բարձրացված ե պահպանիչ վոտքի վրա դրված: Այդ դրուծյամբ մարտական զսպանակը սղմված ե, դարկանի գլխիկը բռնված ե լծակի մարտական վոտքի ապուռով: Ինքը լծակը իրեն առանցքով պռակած ե շոնակի մարմնի կատարի վրա յեղած հատուկ փորվածքի մեջ ե այդ դրուծյամբ ամրացված ե պահպանիչ բուլիքով:

Նետեղու համար շոնակ ստանալիս զննիր, թե մեխանիզմը սարքվո՞ւն ե արդյոք: Դրա համար՝

1. Յետ պտուտակիւր ներքեի լայն անցքի տափողակը:

2. Դիտիր ներսը, արդյոք չկա կենտրոնական խողովակում փոշի, ժանգ, թանձրացած լուղվածք ե այլն: Յեթե կա, մաքրել շորի կտոր փաթած փայտիկներով: Յեթե թանձրացած լուղվածքը կարող ե խանգարել դարկանի աշխատանքը, ապա քանդիր մեխանիզմը ե խնամքով մաքրել կենտրոնական խողովակը, դարկանը ե մարտական զսպանակը:

Մեխանիզմի հատկապես հաճախակի քանդելու կարիքը լինում ե ձմռանը, իբր լուղվածքը ցրտից սառչում ե ե թույլ չի տալիս, վոր դարկանն իջնի:

Մեխանիզմը պետք ե քանդել վորոշակի կարգով. անհրաժեշտ ե այդ կարգը խստորեն պահանել, վոր չփխսովի շոնակի մեխանիզմը:

Քանդելու համար՝

1. Յետ պտուտակիւր ներքեի անցքի տափողակը:

2. Բաց անցքով շոնակը դիր սեղանի, փռված շինելի կամ վրանի վրա: Հակառակ դեպքում կա-

բող և զարկանը դուրս թռչել և խիստ ցավեցնել քեզ կամ ընկերոջդ:

3. Ձախ ձեռքով բռնիր նոնակը և մարտական վոտքի լծակը կպցրու մարմնին:

4. Աջ ձեռքով ուղղի՛ր պահպանիչ բուլիքի պո-
զիկները և ողակից բռնած դուրս հանիր բուլիքը:

5. Աջ ձեռքիդ մատներով բռնիր մարտական
վոտքի լծակից և աստիճանաբար բաց թող լծակը:
Մարտական զսպանակը ցած կքաշի զարկանը,
իսկ զարկանն իր գլխիկով ցած կքաշի լծակի
վերին ծայրը: Լծակը կսկսի շուռ գալ իր ա-
ռանցքի վրա և նրա ներքևի ծայրը կսկսի վեր
բարձրանալ: Յերբ լծակը բաժանվի զարկանի
գլխիկից, զարկանն ուժով ցած կընկնի, և լծակը,
յեթե նրան մատներով չբռնես, վեր կթռչի և
կարող է խիստ ցավեցնել քեզ կամ ընկերոջդ:

6. Բարձրացրու նոնակի մարմինը և վերցրու
ընկած զարկանն ու մարտական զսպանակը:

7. Մաքրիր մեխանիզմի մասերը և կենտրո-
նական խողովակը:

Մաքրելուց հետո պետք է մեխանիզմը սառքել՝
Դրա համար՝

1. Հագցրու մարտական զսպանակը զարկանի
վրա մինչև նրա հեռվիլը զարկանի պսակին:

2. Ձարկանը զսպանակով մացրու նոնակի
կենտրոնական խողովակին ախպես, վոր զարկանի
գլխիկն ուղղված լինի դեպի մարտական վոտքի
լծակը:

3. Հրացանի շամփրի ծայրը մացրու կենտրո-
նական խողովակի մեջ, վոր նա հենվի զարկա-
նին, իսկ շամփրի մյուս ծայրը հենիր սեղանին,
գետնին և այլն: Այնուհետև ձախ ձեռքով բռնիր
նոնակի մարմնից և ուժով նոնակը ցած սեղանի
շամփրի վրա: Այդ դեպքում մարտական զսպա-
նակը կսեղմվի և զարկանի գլխիկը վեր կբարձ-
րանա վերևի անցքի միջով:

4. Աջ ձեռքով վերցրու մարտական վոտքի
լծակը, իր տեղը դիր, բռնիր զարկանի գլխիկը
և մատներով լծակը սղմիր նոնակի մարմնին:

5. Այնուհետև աջ ձեռքով վերցրու պահպա-
նիչ բուլիքը և մացրու իր տեղը:

6. Բուլիքի պողկենքը ծռիր աջ ու ձախ,
վորպեսզի գա պինդ կպած մնա:

7. Պտուտակներ իր տեղը ներքևի անցքի տա-
փողակը:

Նոնակի պցնելը

Նոնակը պցնելուց հետո պտուտակներ ներ-
քևի անցքի տափողակը, վերցրու պատիճ. դետո-

նատուրը և մտցրու նոնակի մեջ ախպես, վոր նրա յերկար ծալրը մտնի կենտրոնական խողովակի կողքի ճյուղավորման մեջ, իսկ պսակը պատիճով մտնի կենտրոնական խողովակի մեջ և կանգնի դարկանի դիմաց: Դրանից հետո ներքևի անցքի տափողակը պտուտակիւր իր տեղը:

Հիշիր, վոր լեթե բիկֆորդյան քուղը ձգվել, ուղղվել ե և պատիճ-դետոնատորի պսակը կենտրոնական խողովակի դիմացը չի գալիս, կարելի չե մատներով կռացնել բիկֆորդյան քուղը և պատիճի պսակն ուղղել դեպի խողովակը:

Յեթե ներքևի անցքի տափողակը պտուտակելու ժամանակ, տափողակը լրիվ կերպով ներս չպտուտակվի և դեմ ընկնի պատիճ-դետոնատորի բիկֆորդյան քուղին, ապա դուռով մի պտուտակիր, այլ թող այդ դուռլթամբ:

Նուակը ցեսելը

1. Նոնակը աջ (յեթե ձախլիկ ես, ձախ) ձեռքդ վերցրու ախպես, վոր ներքևի անցքի տափողակը ուղղված լինի դեպի ցած, իսկ մարտական վռտքի լծակն ուղղված լինի դեպի ձեռքիդ ափը: Մատներովդ պինդ սեղմիր նոնակը

2. Ազատ ձեռքիդ մատներով ուղղիր պահպա-

նիչ բուլիքի պողիկները և դուրս քաշիր բուլիքը ողակից բռնած:

3. Ձեռքդ ուժեղ վեր բարձրացրու և ուժեղ թափով նոնակը նետիր դեպի վեր՝ դեպի նպատակը:

4. Բեկորներից պաշտպանվիր թագստոցի լետևում մինչև նոնակի պայթելը:

Նեսելու ժամանակ՝ մարտական վռտքի լծակը կթռչի մի կողմ և կընկնի գետին նետողից վոչ հեռու: Ջարկանը կիջնի և կջարդի փոքր պատիճը: Պատիճից կվառվի բիկֆորդյան քուղի մեջ փոշինման զառոդը: Հինգ վայրկյանից հետո կրակը վառողի միջով կհասնի դետոնատորին և նոնակը կպայթի:

Նուակը ցեսելիս հիշիր, վոր՝

1. Պահպանիչ բուլիքը հանելուց հետո, վարկանը կանգնած ե մարտական վռտքի վրա և նընակը պետք ե առմիջապես նետել:

Յեթե կարիք չկա նոնակը նետելու, ապա բուլիքն իր տեղը մտցրու և դատարկիր նոնակը:

2. Նոնակի բեկորները հարվածում են պայթելու տեղից մինչև 200 մետր հեռավորության վրա:

Բեկորներից ինքդ թագնվիր և տես, վոր ընկերներդ ել թագնված լինեն:

3. Յերբեք ձեռք չտառ չպայթած նռնակ-
ներին, այլ դրանց մասին զեկուցիր պարապ
մուկներ ղեկավարող հրամատարին:

Ֆ. 1. ՆՌՆԱԿԸ՝ ԿՈՎԵՆԵՆԻԿՈՎԻ ՊԱԹԹՈՒՑԻՉՈՎ.


Նռնակի կառուցվածքը

Ֆ. 1. Նռնակի, Կովեշնիկովի պայթուցիչով,
քաշն է մոտ 700 գրամ և բաղկացած է մարմ-
նից, պայթեցնող լիցքից և Կովեշնիկովի պայ-
թուցիչից (նկ. 3):

Նռնակի մարմինը թուջից է, ձվաձև տեսք ու-
նի: Արտաքուստ մարմինը ակոսներով բաժան-
ված է քառակուսիների: Վերևից ունի պտու-
տակավոր անցք, վորի միջով լցված է պայթեց-
նող լիցքը, իսկ նետելուց առաջ պտուտակվում
է պայթուցիչը: Պայթուցիչները նռնակներին
առանձին են պահվում, իսկ նռնակը պահելու
ժամանակ անցքը փակված է լինում չժանգոտող
նյութից շինած հասարակ խցանով:

Պայթուցիչ լիցքը մոտ 60 գրամ ուժեղ պայթու-
ցիկ-մի նյութ է: Գտնվում է նռնակի մարմնի
ներսում և պայթում է միմիայն ղեկողնատորի
շնորհիվ:

Կովեցենիկովի պայթուցիչը ծառայում է նռնակը



Նկ. 3. Ֆ. 1. Նռնակը՝ Կովեցենիկովի պայթուցիչով.

1—նռնակի մարմինը, 2—ներքևի խցանը, 3—պայթուցիչ
լիցքը, 4—պայթուցիչի տուփը պտուտակաձև ակոսներով
նռնակի անցքի մեջ պտուտակելու համար, 5—պայթու-
ցիչի պատիճը, 6—պայթուցիչի վառողը, 7—ղետոնատոր,
8—զարկան, 9—զարկանի անցքը պահպանիչ բուլբուլի հա-
մար, 10—պահպանիչ-գնդիկ, 11—մարտական զսպանակ,
12—պահպանիչ թասակ, 13—թասակի զսպանակը, 14—պահ-
պանիչ թասակի արտաքին լծակը, 15—պահպանիչ ողակը
բուլբուլի:

պալթուցիներու համար: Դա բաղկացած է պալթուցիչի պղնձե տուփից (նկ. 3), պատիճ-դետոնատորից, վորը ներքևից պտուտակված է պայթուցիչի տուփի մեջ, և բոցավառող մեխանիզմից, վորը գտնվում է պալթուցիչի տուփի վերին մասում:

Պատիճ-դետոնատորը պղնձե ուղղաձիգ խողովակի տեսք ունի և բաղկացած է փոքր պատիճից, վառողային հեռակայական բաղադրությունից և դետոնատորից:

Բոցավառող մեխանիզմը բաղկացած է՝

1) զարկանից, 2) մարտական զսպանակից, 3) պահպանիչ-գնդիկից, 4) պահպանիչ թասակից՝ արտաքին լծակով, 5) թասակի զսպանակից, 6) պահպանիչ բուլբից՝ ողակով:

Պայթուցիչի մասերը մարտական դրուժյան համար գործառնում են սաքքում: Սաքքած պալթուցիչի մեջ բոցավառող մեխանիզմի մասերը գտնվում են հետևյալ դրուժյան մեջ.

1. Զարկանը վոտքի վրա լի զրված:

2. Մարտական զսպանակը սեղմված է պայթուցիչի տուփի հատակի և զարկանի միջև:

3. Զարկանը վոտքի վրա զրված վիճակում պահպանվում է պահպանիչ-գնդիկով և պահպանիչ բուլբով:

Պահպանիչ-գնդիկը մտցված է պալթուցիչի տուփի պատի մեջ լիցած անցքի մեջ և կիսով չափ գտնվում է ալք պատի մեջ, իսկ կիսով չափ զարկանի հատուկ փորատի մեջ: Այդպիսով պահպանիչ-գնդիկը թույլ չի տալիս, վոր զարկանն իջնի:

4. Պայթուցիչի տուփի վրա դրսից պինդ հագցրած է պահպանիչ թասակը, վորը թույլ չի տալիս, վոր գնդիկը դուրս ընկնի:

5. Թասակի զսպանակը սեղմված է ներսում թասակի հատակի և պալթուցիչի տուփի միջև:

6. Պահպանիչ բուլբը մտցված է և անցնում է պահպանիչ թասակի, պալթուցիչի տուփի պատերի և զարկանի միջից: Բուլբի պողկեկները լիտ են ծոված և մեխանիզմի բոլոր մասերը ամուր մնում են իրենց տեղերում:

Նունակը նախապատրաստելը նետելու համար

1. Նունակի անցքից դուրս հանիր հասարակ խցանը և դեն ձգիր:

2. Բարակ փայտիկով պալթուցիչի լիցքի մեջ փոս շինիր դետոնատորի խողովակի համար:

3. Վերցրու պալթուցիչը և մտցրու նունակի անցքի մեջ ախպես, վոր դետոնատորի խողովակը մտնի լիցքի փոսի մեջ:

4. Պայթուցիչը մինչև վերջը պտուտակեր նըռնակի անցքի մեջ:

Նոնակը հետեւում համար նախապատրաստելիս հիշել, վոր յեթե նոնակի անցքի փորակի մեջ ընկնեն պայթեցնող լեցքի մասնիկները, ապա նախքան պայթուցիչը պտուտակել սկսելը անհրաժեշտ է ժաքել անցքի փորակն այդ մասնիկներէրց:

Պայթուցիչը պտուտակելիս, ակոսավոր մասը կարող է ամբողջովին չպտուտակվիլ. այդ դեպքում բավական է, յեթե պայթուցիչը ներս մտնի 3—4 պտույտ:

Նոնակը անցելը

1. Լցրած նոնակը վերցրու աջ կամ ձախ ձեռքդ այնպես, վոր պահպանիչ թասակի արտաքին լծակը քեզինից դեպի հակառակ կողմը լինի: Լծակը մատներովդ սեղմիր նոնակի մարմին:

2. Ազատ ձեռքիդ մատներով ուղղիր պահպանիչ բուլիքի պողկենները և բուլիքը դուրս հանիր ողակից բռնած:

3. Զեռքդ վեր բարձրացրած ուժեղ թափով նետիր նոնակը դեպի վեր ու դեպի նպատակը:

4. Ծածկվիր բեկորներից թագստոցի յետևում: Նետելիս թասակի զսպանակը լայնանում է և

սեղմում է թասակին դեպի վեր. պահպանիչ-զըռնիկի տեղավորման համար յեղած տնցքը բացվում է, զնդիկը դուրս է թռչում, իսկ զարկանը աղատում է. մարտական զսպանակը լայնանում է և ուժգին կերպով ցած է մզում զարկանը. զարկանի ասեղը պայթեցնում է փոքր պատիճը. պատիճի կրակը վառում է հեռակայան վառողային բաղադրութունը. 4—6 վայրկյանից հետո կրակը հասնում է դետոնատորին, և նոնակը պայթում է:

Նոնակը հետելիս հիշիր, վոր՝

1. Պահպանիչ բուլիքը հանելուց հետո անհնարին է նորից բուլիքն իր տեղը դնել: Ուստի, բուլիքը հանելուց հետո, աշմիջապես նկտիր նոնակը:

2. Բեկորները հարվածում են պայթելու տեղից մինչև 200 մետր հեռավորութան վրա: Բեկորներից ծածկվիր թագստոցի յետևում:

3. Յեթե նետված նոնակը չպայթեց, ձեռք մի տար նրան, այլ հրամատարին զեկուցիր:

ՆՈՆԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐԸ ՊԱՆԵԼՆ ՈՒ ԽՆԱՄՆԵԼԸ

Խաղաղ ժամանակ վաշտերում և զորախմբերում զարծ են ածվում վարժական նոնակներ: Դրանք

իրենց արտաքին տեսքով մարտական նոնակներին զանազանվում են նրանով, վոր դրանց մարմինները դրսի կողմից ներկվում են պիտակ կամ սև յուղաներկով և մակադրված և լինում «վարժական»:

Պատերազմում ամեն մի մարտիկ շարունակ իր վրա կրում է 2 մարտական նոնակ և 2 դետոնատոր: Մարտիկներն այդ նոնակները պետք է պահեն իրենց հատուկ նոնակային պաշտակներից: Միաժամանակ տնիքաժեշտ և հիշել և խտորեն կատարել հետևյալ կանոնները.

1. Նոնակները պահիր դետոնատորից առանձնացած՝ նոնակները պաշտակի հատակում, իսկ դետոնատորները պաշտակի կափարիչի տակ լեղած հատուկ բնի մեջ: Մարտում նոնակը թուլատրվում է լցնել հակառակորդին 300—400 մետր մոտեցած ժամանակ, յերբ ձեռնամարտ է նախատեսվում:

2. Յերկար ժամանակ պահելու դեպքում զննիր նոնակներդ, մաքրիր նրանց վրայի փոշին, խնդ մեխանիզմները թեթև կերպով յուղիր հրացանի յուղով:

3. Նոնակներն ու դետոնատորները պահպանիր ցնցումներից և հարվածներից, այլև անախալուց (խարուկի մոտ): Հիշիր, վոր քո անփութությունը կարող է դառնալ քո և ընկերներիդ մահվան պատճառը:

4. Նոնակներդ միշտ միանգամայն սարքին պահիր, դրանք մեծ ծառայություն կմատուցեն քեզ մարտում: Ուսումնասիրիր նոնակները, դրանց գործողութունը և դրանց մեխանիզմների աշխատանքը:

Անցիր հարվածայինների շարքերը: Դո ցուցանիշները սոցմբցման բնագավառում պետք է լինեն՝

Վարժական նոնակ նետելիս պետք է նետման հետևիքները ճշգրտելով հասցնել 45 մետրի:

Վարժական նոնակներ նետելիս պետք է հասնել այնպիսի դիպկության, վոր նոնակը նպատակից մեկ մետրից ավելի հեռու չընկնի:

Չեռֆի մարտական նոնակներ նետելու դասընթացի 1-ին վարժությունը կատարելիս, պետք է հարվածել բոլոր 3 նետները վաղ պահա, հաճ յուրաքանչյուրին 5-ական բեկորներ դիպցնելով:

Նոնաձիգների խմբակի կազմի մեջ 2-րդ վարժությունը կատարելիս, յերբ բոլորն էլ նոնակներ միաժամանակ են նետում, պետք է հարվածել բոլոր 10 նետները:

Հմտությամբ տիրելու յերբ զենքիդ, ուսումնասիրիր զենքդ և խաղաղության պահպանիր դրան:



ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ձեռքի նոնակները նշանակումը և մտքական հատկությունները	3
2. 1914 թվի ախարի ձեռքի նոնակը նոնակի կառուցվածքը	3
նոնակի բոլորակառույ մեխանիզմի ստեղծումը	6
նոնակը նախապատրաստելը զործելու համար	8
նոնակը նետելը	11
3. Մեղսի նոնակը	12
նոնակի կառուցվածքը	—
Մեխանիզմը ստեղծելը, բանդելն ու սարքելը	14
նոնակը լցնելը	17
նոնակը նետելը	18
4. Փ. Ի. նոնակը՝ հովեշնիկովի պայթուցիչով	20
նոնակի կառուցվածքը	—
նոնակը նախապատրաստելը նետելու համար	23
նոնակը նետելը	24
5. Նոնակները և դետոնատորները պահելն ու խնամելը	25

ԿԱԶՄԵՑ. Կ. ՊՐՈՒՆՑՈՎ, ԽՄԲ. Պ. ԱՅԱՅԱՆ,
ՔԱՐԳՄ. Ն. ՄԿՐՏՅԱՆ, ՄՐԵԱԳՐԵՑ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հանձնված է արտադրություն 15 ապրիլի 1932 թ.
Ստորագրված է տպելու . . . մայիսի 1932 թ.

Գևորգյան տպարան

Պլավին 7461(բ) Հրատ. 2182. Գատվեր 1312 Տիրած 4000

ՀՀ Ազգային գրադարան



NL0937374

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

1
33 64

368
= 1932p.



ПАМЯТКА РУЧНОМУ ГРАНАТОМЕТЧИКУ

Госиздат ССР Армени
Эривань — 1932